Ապառաժ

Հիմնադրված է 1991 թվականին: 9 (350) 1-17 մայիս, 2014թ.

ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀՅ Դաշնակցության Արցախի Կենտրոնական Կոմիտեի պաշտոնաթերթ

Մենք համացանցում

www.aparaj.am

Խմբագրական

Արցախը իր «ոչ»-ը արդեն ասել է

Ադրբեջանի, Հայաստանի եւ Ղարաբաղի միջեւ ստորագրված հրադադարի պայմանագրի 22-ամյակի նախաշեմին ԵԱՀԿ Մինսկի խմբի ԱՄՆ համանախագահ Ջեյմս Ուորլիքի՝ Միջազգային խաղաղության Քարնեգի հիմնադրամում տեղի ունեցած ելույթը, այնուհետեւ մայիսի 15-ին ադրբեջանական լրատվամիջոցներում հայտնված հարցազրույցը նախ եւ առաջ ահազանգ է մեզ համար, որը հիշեցրեց, թե այսօր ինչ վիճակում է գտնվում ղարաբաղ-ադրբեջանական հակամարտության բանակցային գործընթացը:

Կապված աշխարհաքաղաքական վերջին իրադարձությունների հետ՝ ԱՄՆ կողմից փորձ էր արվում տարածաշրջանում իր դերակատարությունը ցույց տալու, եւ եւս մեկ անգամ շեշտելու, որ նա բանակցային գործընթացի կարեւոր մաս է կազմում: Ուկրաինայի վերջին զարգացումների ֆոնի վրա, որտեղ ԱՄՆ-ն դժվարանում է հասնել իր վերջնանպատակին՝ Ուկրաինան ամբողջությամբ ԱՄՆ տիրույթ ներգրավելու ուղղությամբ, ԱՄՆ-ն ներկայումս փորձում է իր ներկայությունը ամրապնդել Կովկասյան տարածաշրջանում, ինչին ցանկանում է հասնել հենց Ղարաբաղյան հակամարտությունն օգտագործելով:

Վերը նշվածը համահունչ է նաեւ կարծիքի՝ ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովի ղեկավարի Բաքվում հնչեցրած խոսքերն այն մասին, որ Ուկրաինայի դեպքերը ցույց տվեցին, որ Ղարաբաղյան հարցում պետք է որոշակի արդյունքի հասնել՝ ուղղակիորեն կապելով Ուկրաինայում տեղի ունեցող իրադարձությունները ղարաբաղյան խնդրի հետ:

Ամերիկացի համանախագահի շուրթերից հնչած ելույթը եւ ելույթում նշված 6 սկզբունքներն ընդհանուր առմամբ 2007 թվականից շրջանառության մեջ են դրված Մադրիդյան փաստաթղթում: Ըստ ամերիկացի համանախագահի՝ իր նշած սկզբունքների հիման վրա Ղարաբաղի հարցին պետք է վերջնական լուծում տրվի:

Պետք է ընգծել, որ Ուորլիքը նշել է, որ իր ելույթը ԱՄՆ պաշտոնական դիրքորոշումն է Ղարաբաղյան հիմնահարցի շուրջ: Եվ այն ուներ կարծես թե վերջնագրի տեսք, քանի որ նա նշում է, որ Ղարաբաղյան հարցին պետք է վերջնական լուծում տրվի, իսկ ադրբեջանականան ԶԼՄ-ներին տված իր հարցազրույցում նա նշել է, որ ստատուս քվոն անընդունելի է եւ ավելի վտանգավոր:

Սա պարզապես հիշեցնում է, թե ինչի շուրջ են այսօր բանակցում Հայաստանն ու Ադրբեջանը, քանի որ մինչ այսօր Հայաստանի իշխանությունները հստակ գնահատական չեն տվել Մադրիդյան սկզբունքներին: Եվ այսօր, երբ Հայաստանի հետ խոսվում է վերջնագրի տեքստով, դրա պատճառներից մեկը ՀՀ իշխանությունների վարած ոչ հստակ քաղաքականությունն է:

Հատկանշական է, որ Մադրիդյան սկզբունքների վերաբերյալ Հայաստանի եւ Արցախի պաշտոնական դիրքորոշումները խիստ տարբերվում են:

Վերջերս Ուորլիքը իր թվիթերյան էջում շնորհակալություն հայտնեց իր ելույթի նկատմամբ հնչած բոլոր՝ նույնիսկ քննադատական մեկնաբանությունների համար, այդպիսով կարեւորելով նման քննարկումների միջոցով Լեռնային Ղարաբաղի հարցում խաղաղության հասնելու համար:

Իսկ Հայաստանում ԱՄՆ դեսպան Ջոն Հեֆֆերնի խոսքերով՝ Ուորլիքի նպատակը նոր քաղաքականության մասին հայտարարելը չէր, այլեւ խաղաղության համաձայնագրի վերաբերյալ հասարակական քննարկում սկսելը: Այս ամենից կարելի է եզրակացնել, որ ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացը մտել է մի փուլ, որտեղ միջազգային միջնորդները փորձում են ստուգել Հայաստանում եւ Արցախում հասարակության լայն շրջանակների տրամադրվածությունն արցախյան հարցում՝ Հայաստանին արդեն վաղուց պարտադրվող զիջումների նկատմամբ: Այժմ ժամանակն է, որ հայ քաղաքացիական հասարակությունն իր ասելիքը հստակ ներկայացնի, որպեսզի թույլ չտա, որ արցախյան հարցի շուրջ այս կործանարար գործընթացը հասնի իր նպատակին:

Հարց է առաջանում. արդյոք Հայաստանի իշխանություններն արդեն իրենց համաձայնությունն են տվել այդ պարտվողական փաստաթղթին, սակայն մի բան հստակ է? Արցախն ասել է ոչ: Եվ այդ ոչը Արցախի ժողովրդի անունից հնչեցվել է երկրի բարձրագույն իշխանության մակարդակով:

Իսկ ՊԲ-ն հայտարարել է, որ կարճ ժամանակում գրավելու ենք այն դիրքերը, որից կկրակեն մեր զինվորների վրա:

Արցախում Ուորլիքին սուլոցներով դիմավորեցին

Բերձորում ՀՅԴ Արցախի երիտասարդական միության նախաձեռնությամբ տեղի ունեցավ բողոքի ակցիա՝ վերջերս ԵԱՀԿ Մինսկի խմբի ԱՄՆ համանախագահ Ջեյմս Ուորլիքի կողմից հնչեցված՝ Ղարաբաղյան հակամարտության լուծմանն ուղղված կետերի դեմ, որոնք գրեթե չեն տարբերվում Մադրիդյան տխրահռչակ սկզբունքներից:

Բողոքի ակցիային են միացել Արցախի երիտասարդական եւ հասարակական մի շարք կազմակերպություններ, բերձորցիներ: Ցույցի մասնակիցները պարզել էին պաստառներ՝ «Հարգեք մեր իրավունքները», «Ոչ Արցախում խաղաղապահ զորքին», «Դատապարտեք իրական ագրեսորին» եւ այլն, ինչպես նաեւ հնչեցվեցին Ուորլիքի ելույթը դատապարտող կոչեր:

Բողոքի ակցիայի մասնակիցները Բերձորում փակելով մայրուղին՝ պահանջեցին, որպեսզի ԵԱՀԿ Մինսկի խմբի ԱՄՆ համանախագահ Ջեյմս Ուորլիքը պատասխանի իրենց հուզող հարցերին:

Որոշ ժամանակ անց Ուորլիքը տեղի տվեց երիտասարդների պահանջին եւ դուրս եկավ ծառայողական ավտոմեքենայից:

Երիտասարդներն իրենց անհամաձայնությունը հայտնեցին ամերիկացի համանախագահի ելույթում հնչած կետերին եւ որոշ հարցադրումներ ուղղեցին նրան: Սակայն ոչ մի հարցի Ուորլիքը հստակ պատասխան չտվեց՝ արժանանալով ցուցարարների սուլոցներին:

Այնուհետեւ ցուցարարներն իրենց բողոքի ցույցը շարունակեցին Քաշաթաղի շրջվարչակազմի շենքի դիմաց, որտեղ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները, ըստ նախատեսված ծրագրի, հանդիպում էին Քաշաթաղի շրջանի շրջվարչակազմի ղեկավարի հետ:

«ԱՊԱՌԱԺ»

Մեր ընկերոջ հիշատակը մշտապես վառ ու անմար կմնա

2014թ.մայիսի 7-ին կյանքից անժամանակ հեռացավ մեր մարտական ու քաղաքական ընկեր Կամո Սերգեյի Մարտիրոսյանը:

Երեւանում ստանալով բարձրագույն կրթություն, Կ. Մարտիրոսյանը վերադարձավ հայրենի Արցախ: Չնայած կարող էր մնալ Մայր հայրենիքում, որտեղ լեռնային ինժեների իր մասնագիտության մեջ էլ ավելի խորանալու մեծ հնարավորություն կար: Նա կարծես զգում էր, որ մոտալուտ է Ղարաբաղյան շարժումը եւ, բնական է, չէր կարող մեկուսի մնալ մեր ազգային-ազատագրական պայքարից:

Կ. Մարտիրոսյանն այն առաջին արցախցի հայրենասերներից էր, ովքեր 1985-86թթ. հայրենի երկրամասում նախաձեռնեցին ԼՂԻՄ-ը Մայր Հայաստանին վերամիավորելու խնդրանք-պահանջով հանրագրերի կազմումն ու զանգվածային ստորագրահավաքների կազմակերպումը՝ ուղղված ԽՍՀՄ նախկին իշխանություններին: Որպես այդպիսին՝ նա անդամ էր Արցախյան շարժման առաջին ընդհատակյա խմբակների:

1989թ., երբ վեց տասնամյակ անց ՀՅԴ-ն վերադարձավ հայրենիք, Կամո Մարտիրոսյանն Արցախում առաջիններից էր, որ անդամագրվեց նրան եւ հավատարիմ մնաց իր սուրբ երդմանը մինչեւ կյանքի վերջին օրը:

Լինելով կամավորական ջոկատի անդամ, իսկ 1992-93թթ.՝ ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի հետախուզության բաժնի բաժանմունքի պետ, նա բազմիցս վտանգի է ենթարկել կյանքը՝ գործելով նաեւ հակառակորդի թիկունքում:

1993-96թթ. Կ. Մարտիրոսյանը ծառայել է N պաշտպանական շրջանում՝ որպես ինժեներական ծառայության սպա, իսկ 1996-98թթ.՝ N դիվիզիայի ինժեներական ծառայության պետ՝ նախաձեռնելով եւ կյանքի կոչելով մի շարք ուշագրավ ինժեներական ծրագրեր, որոնց շնորհիվ անհամեմատ ամրապնդվեցին ու կայացան ԼՂՀ ՊԲ ինժեներական ստորաբաժանումները:

Զորացրվելով 1998թ., Կ. Մարտիրոսյանն իր ողջ մտավոր ու կազմակերպչական ներուժը նվիրաբերել է Արցախի ամենահրատապ ռազմավարական ծրագրերից մեկի՝ վերաբնակեցման գործընթացի իրականացմանը: Աշխատելով Շահումյանի շրջանի ճարտարագետ, «Կաթոլիկ օգնության ծառայություն» կազմակերպության ծրագրերի ղեկավար, Թուֆենկյան բարեգործական հիմնադրամի շինարարական ծրագրերի պատասխանատու, ԼՂՀ կառավարությանն առընթեր միգրացիայի, փախստականների եւ վերաբնակեցման վարչության պետ, Քաշաթաղի շրջանի վարչակազմի ղեկավար՝ Կամո Մարտիրոսյանը հսկայածավալ աշխատանքներ է իրականացրել մեր հայրենական հողերի վերաբնակեցման ուղղությամբ: Անգնահատելի է նրա ավանդը, առանձնապես, շրջանի Առաջամուղ գյուղի հիմնադրման գործում:

2010թ. մայիսի 23-ի խորհրդարանական ընտրություններում մեծամասնական ընտրակարգով, թիվ 16 ընտրատարածքից ընտրվելով ԼՂՀ 5-րդ գումարման Ազգային ժողովի պատգամավոր, ապա եւ՝ ԱԺ ֆինասաբյուջետային եւ տնտեսական կառավարման հարցերի մշտական հանձնաժողովի փոխնախագահ, Կամո Մարտիրոսյանը զգալի աշխատանք է կատարել ժողովրդին հուզող հարցերի վերհանման եւ օրենսդրական կարգավորման ուղղությամբ:

Կամո Մարտիրոսյանն ԱԺ «Դաշնակցություն» խմբակցության անդամ էր, մի հանգամանք, որն ավելի էր ընդգծում նրա պատասխանատվությունը ինչպես իր ընտրողների, նույնպես եւ հարազատ կուսակցության առջեւ:

Մեր վաղամեռ ընկերոջ հիշատակը, անկասկած, մշտապես վառ ու անմար կմնա նրա գաղափարակիցների ու զինակիցների, մեր բոլորի սրտերում:

ԼՂՀ ԱԺ «Դաշնակցություն» խմբակցություն

Արցախում համանախագահներն անակնկալի են եկել

Արցախի նախագահ Բակո Սահակյանն այսօր ընդունել է ԵԱՀԿ ՄԽ համանախագահներին: Նախագահի հետ հանդիպումը տեւել է 1.5 ժամ, որից հետո ռուսաստանցի համանախագահը լրագրողներին հայտնել է, որ չեն պատրաստվում ճեպազրույց ունենալ. իրենց տեսակետը տարածաշրջան կատարած այցի մասին կհրապարակեն իրենց պաշտոնական էջում:

«Մեր այցելության հիմնական շեշտը դրված է տարբեր շրջանների հետ ծանոթանալու, ինչպես նաեւ մարդկանց հետ շփվելու վրա»,- նշեց ռուսաստանցի համանախագահը: Ըստ Իգոր Պոպովի՝ համանախագահները պատրաստվում են հանդիպել Լեռնային Ղարաբաղի եւ Ադրբեջանի պաշտպանության նախարարների հետ սահմանում առկա իրավիճակը քննարկելու համար:

Համանախագահների հետ կայացած հանդիպման ժամանակ Արցախի նախագահը շեշտել է, որ Արցախի համար անկախությունն ու ազատությունը բացառիկ արժեքներ են, եւ վերադարձ անցյալին՝ թե կարգավիճակի, թե սահմանների առումով, անհնարին է:

Այն, որ Ղարաբաղի բնակչությունը համաձայն չէ ԵԱՀԿ ՄԽ համանախագահների կողմից ներկայացված 6 կետերի հետ, ապացույցն էր երեկ Բերձորում տեղի ունեցած բողոքի ակցիան:

Ըստ ամերիկացի համանախագահի՝ երեկ Բերձորում անակնկալի են եկել. «Մենք հարգում ենք բնակչության իրավունքը, ովքեր խաղաղ ձեւով ներկայացնում են իրենց իրավունքները: Ինձ համար անակնկալ էր երեկվա բողոքի ակցիան, այնուամենայնիվ, ես մեքենայից դուրս եկա եւ շատ օգտակար զրույց ունեցա բողոքի ակցիայի մասնակիցների հետ: Ես կարծում եմ, որ շատ օգտակար է իմանալ տարբեր կարծիքներ այս տեսանկյունից: Լինելով Ղարաբաղում, ես իսկապես ծանոթացա տարբեր կարծիքների հետ, եւ կարծում եմ՝ այն օգտակար կլինի:

Ըստ Ուորլիքի՝ արդեն երկու տասնամյակ է՝ ինչ նախկին եւ ներկայիս համանախագահներն աշխատում են, որպեսզի գտնեն հակամարտության կարգավորման լուծումը, եւ ամենավատ տարբերակն ամերիկացի համանախագահի գնահատմամբ՝ կլինի հակամարտության վերսկսումը: Սակայն Ուորլիքը գտնում է նաեւ, որ չնայած կարող է անհամաձայնություն լինի, սակայն, եթե բոլորս միասին աշխատենք, կկարողանանք ինչ-որ ելք գտնել:

«Լեռնային Ղարաբաղը չափազանց գեղեցիկ երկիր է: Ես տպավորված եմ՝ տեսնելով երիտասարդներին: Բոլորիս պարտքն է՝ այնպես անել ամեն ինչ, որ այստեղ լինի խաղաղություն, որպեսզի նոր սերունդը ապրի խաղաղ պայմաններում,- հավաստիացնում է ամերիկացի համանախագահը եւ հավելում,- Մեր հիմնական նպատակն այն է, որ հարավկովկասյան տարածաշրջանում լինի երկարատեւ խաղաղություն եւ կայունություն, մարդկանց համար ստեղծենք բարեկեցության պայմաններ»:

Ուորլիքը ներկայացրեց տեսակետ իր կողմից ներկայացված բանակցային 6 կետերի մասին, որոնց դեմ են արցախցիները: ,Այն 6 կետերը, որոնք ես ներկայացրել եմ, դրանք նոր բան չեն. նախկինում էլ դրանց մասին խոսել են ԱՄՆ-ի, Ռուսաստանի եւ Ֆրանսիայի նախագահները: Իհարկե, սրանք վերջնական տարբերակներ չեն, դեռեւս պետք է քննարկենք, սակայն կարող են հիմք հանդիսանալ հետագա կարգավորման համար: Խնդիրները թաքցնելը ճիշտ չէ: Լեռնային Ղարաբաղի ժողովուրդն իրավունք ունի ու արժանի է, որպեսզի իմանա այդ ամենի մասին եւ հայտնի իր համաձայնությունը կամ անհամաձայնությունը: Կարծում եմ, որ սա անկեղծ երկխոսության հիմքն է»:

Պատասխանելով միջազգային կառույցների կողմից ԼՂՀ անկախության չճանաչման վերաբերյալ հարցին՝ ամերիկացի համանախագահը նշեց, որ դրա համար անհրաժեշտ է հիմնախնդիրը կարգավորել, որը պետք է լինի համապարփակ:

«Այնպես չէ, որ պետք է խոսենք 1-2 խնդիրների մասին եւ անտեսենք մնացածները: Կարգավիճակի հարցը միայն կետերից մեկն է, բայց կան նաեւ այլ կետեր, եւ պետք է այնպես անել, որ բոլոր ուղղություններով հասնենք հաջողության: Այս տեսանկյունից կարեւոր եմ համարում մի բան շեշտել, որ այս ամենը պարտադիր որոշում չէ, Մինսկի խումբը չի կարող պարտադրել որոշում, մենք այստեղ ենք, որպեսզի օգնենք ժողովրդին, լսենք ձեր կարծիքը եւ հանդիպենք ոչ միայն դե ֆակտո իշխանությունների հետ, այլ նաեւ ժողովրդի հետ: Անհամբեր սպասում եմ մյուս այցելություններին»:

Հիշեցնենք, որ Բերձորում ՀՅԴ Արցախի երիտասարդական միության նախաձեռնությամբ տեղի ունեցավ բողոքի ակցիա՝ վերջերս ԵԱՀԿ Մինսկի խմբի ԱՄՆ համանախագահ Ջեյմս Ուորլիքի կողմից հնչեցված՝ Ղարաբաղյան հակամարտության լուծմանն ուղղված կետերի դեմ: Բողոքի ակցիային են միացել Արցախի երիտասարդական եւ հասարակական մի շարք կազմակերպություններ, բերձորցիներ:

Անի ԱՉԱՏՅԱՆ

Արցախի ԱԳՆ-Ի պատասխանը Ուորլիքին

Արցախի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը հաղորդագրություն է տարածել, որում արձագանքում է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ Ջեյմս Ուորլիքի՝ մայիսի 7-ի ելույթին:

Արցախի ԱԳՆ-ի հայտարարության մեջ մասնավորապես նշված է. «Անհրաժեշտ ենք համարում նշել, որ ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության կարգավորման հեռանկարների վերաբերյալ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դիրքորոշումը մնում է անփոփոխ:

Դեպի անցյալ վերադարձի մասին խոսք անգամ լինել չի կարող: Լեռնային Ղարաբաղի ճակատագիրը որոշվել է նրա ժողովրդի կողմից 1991թ. անկախության հանրաքվեի ժամանակ՝ ազատ եւ իրավական կամարտահայտության միջոցով: ԼՂՀ անկախությունն ու անվտանգությունը բացառիկ արժեքներ են, որոնք ենթակա չեն որեւէ սակարկության:

Գտնում ենք, որ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների համատեղ ջանքերը պետք է կենտրոնացվեն կարգավորման այնպիսի մեխանիզմների մշակման վրա, որոնք, հաշվի առնելով առկա իրողությունները, պայմաններ կապահովեն ԽՍՀՄ փլուզման եւ Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմի արդյունքում ստեղծված երկու անկախ պետությունների՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության եւ Ադրբեջանի խաղաղ գոյակցության համար:

«ԱՊԱՌԱԺ»

ՀՅԴ Արցախի կառույցի արձագանքն Ուորլիքի ելույթին

ՀՅԴ Արցախի ԿԿ ներկայացուցիչ Դավիթ Իշխանյանն անընդունելի եւ մտահոգիչ է համարել Միջազգային խաղաղության Քարնեգի հիմնադրամում ԵԱՀԿ Մինսկի խմբի ամերիկացի համանախագահ Ջեյմս Ուորլիքի ելույթը:

Դավիթ Իշխանյանի կարծիքով՝ չնայած այն հանգամանքին, որ ելույթի տեքստում չի նշվում ,Մադրիդյան սկզբունքներ բառակապակցությունը, սակայն այն բաց ենթատեքստով ներկայացվեց հանրությանը. ամբողջ ելույթի առանցքը կազմված էր Մադրիդյան սկզբունքների հիման վրա:

«Դաշնակցությունը բազմիցս հնչեցրել է, որ Մադրիդյան սկզբունքների շուրջ կառուցվող բանակցային գործընթացը մեզ համար անընդունելի է, եւ որեւէ քայլ, որը կարող է վնասել Ղարաբաղի ապագային, անմիջականորեն կստանա իրեն համարժեք պատասխանը»,- ասաց նա:

ՀՅԴ Արցախի ԿԿ ներկայացուցիչը նշեց, որ բազմիցս Արցախի իշխանությունների կողմից շատ կոշտ դիրքորոշումներ են հնչեցվել Մադրիդյան սկզբունքների վերաբերյալ, եւ այսօր էլ լիահույս է, որ Արցախի իշխանություններն իրենց տեսակետը ոչ միայն չեն փոխել, այլեւ կոշտ կարձագանքեն Ուորլիքի այս ելույթին, որը, ինչպես նա է ներկայացնում, ամերիկյան կողմի հստակ դիրքորոշումն ու քաղաքական գիծն է: Նրա կարծիքով՝ այս քաղաքական գիծը չի տարբերվում մյուս երկու՝ ԵԱՀԿ մինսկի խմբի համանախագահող երկրների քաղաքական գծից:

Նրա համոզմամբ՝ սա նաեւ ԱՄՆ-ի կողմից քայլ է՝ աշխարհաքաղաքական ներկա զարգացումների ընթացքին բանակցային գործընթացում իր դերակատարությունը ցույց տալու, առաջատար դեր ստանձնելու համար:

Ինչ վերաբերում է փոխզիջումներին, ապա Արցախի ԿԿ ներկայացուցիչ Դավիթ Իշխանյանի պնդմամբ՝ Արցախի կողմից փոխզիջումային տարբերակն արդեն իսկ 20 տարի առաջ զինադադարի տեսքով եղել է, եւ բոլորն էլ, այդ թվում՝ ԵԱՀԿ Մինսկի խումբը, շատ լավ գիտակցում են այդ փաստը:

«Այն փոխզիջման տարբերակները, որ պարոն Ուորլիքը փորձում է մատուցել, մեզ համար անընդունելի է, եւ ոչ միայն անընդունելի է, այլեւ մենք, հաստատակամ եւ հավատարիմ լինելով մեր որդեգրած սկզբունքներին, պայքարելու ենք այդ սկզբունքներն արմատավորելու հակառակ դաշտում: Եթե համանախագահները փորձում են իրենց սկզբունքներն արմատավորել մեր դաշտում՝ ի դեմս համերաշխության կոչերի, խաղաղության մեծ համաձայնագիր տերմինների, այս ամենով մեր հանրության մեջ նոր սերմեր են ցանկանում մտցնել, սակայն մենք արդեն իսկ ունենք մեր տեսակետը եւ հենց դա պետք է նրանց համար ընդունելի դարձնել»,- նշեց նա:

Իշխանյանը համոզված է, որ առանց ԼՂՀ-ի անմիջական մասնակցության անպտուղ է լինելու որեւէ բանակցային գործընթաց: Բանակցությունների ընթացքում չի կարող անտեսվել Արցախի ժողովրդի տեսակետը. ԼՂՀ-ն չի կարող տարածքային փոխզիջման տարբերակը ընդունելի համարել:

Արմինե ՆԱՐԻՆՅԱՆ

Արցախում տոնել են Մայիսյան Եռատոնը

Մայիսյան Եռատոնին նվիրված տոնական միջոցառումների շարքն սկսվել է ՊԲ զինվորականների հանդիսավոր քայլերթով ԼՂՀ մայրաքաղաք Ստեփանակերտում եւ շրջկենտրոններում:

Առավոտյան Ստեփանակերտի հուշահամալիրը մարդաշատ էր: Հարյուրավոր քաղաքացիներ ծաղիկներ եւ ծաղկեպսակներ են դրել Հաղթանակը խորհրդանշող հուշաքարի պատվանդանին:

Արցախ է ժամանել ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի գլխավորած պատվիրակությունը, որոնց թվում էր ՀՀ Ազգային Ժողովի նախագահ Գալուստ Սահակյանը:

ՀՀ նախագահի գլխավորած պատվիրակությունը ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանի, ԼՂՀ Ազգային ժողովի նախագահ Աշոտ Ղուլյանի, ԼՂՀ վարչապետ Արա Հարությունյանի ուղեկցությամբ այցելեցին Ստեփանակերտի հուշահամալիր, որտեղ ծաղիկներ եւ ծաղկեպսակներ դրեցին արցախյան ազատամարտում զոհված ազատամարտիկների շիրիմներին:

Այնուհետեւ ՀՀ եւ ԼՂՀ նախագահների գլխավորած պատվիրակությունները մեկնեցին Շուշի, որտեղ օրը խորհրդանշող մի շարք միջոցառումներ տեղի ունեցան:

Նախագահները նաեւ մասնակցել են Շուշիի մարզադաշտում կայացած համերգին, որտեղ հանդես են եկել մի շարք համույթներ Հայաստանից եւ Արցախից:

Օրվա վերջում Ստեփանակերտի Վերածննդի հրապարակում տեղի է ունեցել տոնական համերգ:

Արմինե ՆԱՐԻՆՅԱՆ

ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում փոփոխություններ են տեղի ունենում

Aparaj.am-ի բացառիկ հարցազրույցը Արցախի Հանրապետության նախագահի աշխատակազմի տեղեկատվության գլխավոր վարչության պետ, քաղաքագետ Դավիթ Բաբայանի հետ:

Ադրբեջանական APA լրատվական գործակալությունը օրեր առաջ հրապարակել էր Ադրբեջանի փոխարտգործնախարար Արազ Ազիմովի հարցազրույցը, որտեղ ադրբեջանցի պաշտոնյան հնչեցրել է պաշտոնական Բաքվի դժգոհությունը ԵԱՀԿ Մինսկի խմբում ամերիկացի համանախագահ Ջեյմս Ուորլիքի հայտարարություններից եւ գործողություններից:

ԱՄՆ կառավարությունը չի կիսել Ադրբեջանի փոխարտգործնախարար Արազ Ազիմովի հնչեցրած գնահատականը եւ շարունակում է հավատարիմ մնալ ղարաբաղյան հակամարտության կարգավորման ուղղությամբ իր ստանձնած հանձնառություններին: Միաժամանակ, ԱՄՆ-ը կոչ է արել երկու կողմերին՝ ձեռնարկել հակամարտության խաղաղ կարգավորմանն ուղղված լուրջ քայլեր:

Արցախի Հանրապետության նախագահի աշխատակազմի տեղեկատվության գլխավոր վարչության պետ, քաղաքագետ Դավիթ Բաբայանի համոզմամբ՝ ադրբեջանցի պաշտոնյայի բարձրացրած «մտահոգությունը» իրականում իր մեջ ներառում է արտաքին եւ ներքին քաղաքական խնդիրներ, ինչի շարժառիթները պետք է երկու հարթության մեջ դիտարկել:

«Սկսենք արտաքին քաղաքական ոլորտից: Նախ եւ առաջ՝ պարոն Ուորլիքի հայտարարությունները նոր փուլ են բացում ադրբեջանաղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում, որովհետեւ նա բացահայտորեն հայտարարել է, որ անհրաժեշտ է վերականգնել խեղաթյուրված ձեւաչափը: Իր կողմից հնչեցված այն գաղափարները, որ հակամարտությունը Ադրբեջանի եւ Ղարաբաղի միջեւ է եւ, որ անհրաժեշտ է, որպեսզի Արցախը բանակցային կողմ դառնա, սա հենց նման փոփոխությունների վկայությունն է: Իհարկե? մտածել, որ պարոն Ուորլիքը, լինելով շատ փորձառու դիվանագետ, աշխատելով շատ կարեւոր եւ պատասխանատու պաշտոններում, կարող է նման հայտարարություններ անել առանց խորհրդակցելու ԱՄՆ արտաքին քաղաքական գերատեսչության կամ ԵԱՀԿ Մինսկի խմբի մյուս համանախագահների հետ, բնական է, նման բան չի կարող լինել: Հետեւաբար, մենք տեսնում ենք, որ փոփոխություն է տեղի ունենում հենց Մինսկի խմբի շրջանակներում: Այսինքն, նրանք ունեն միասնական պատկերացում այդ գործընթացի վերաբերյալ: Սա չի նշանակում, որ հենց վաղը ձեւաչափը կվերականգնվի, բայց արվում է կարեւոր մի քայլ, եւ Ադրբեջանը սա դիտարկում է որպես իր շահերին վնաս հասցնող մի զարգացում, քանի որ չի ուզում հակամարտության կարգավորում: Ադրբեջանը շահագրգռված չէ հակամարտության համապարփակ կարգավորման մեջ, եւ իշխող կլանին ու նրա շուրջ համախմբված ուժերին շատ ավելի ձեռնտու է իրավիճակը թողնել այնպես, ինչպես որ կա: Հետեւաբար, սկսում են այդպիսի քայլեր կատարել: Բացի դրանից, այստեղ կա նաեւ այլ հարց: Քանի որ տարածաշրջանում աշխարհաքաղաքական իրավիճակը կտրուկ փոփոխվում է ոչ թե հարավկովկասյան, այլեւ հարակից տարածաշրջաններում, որտեղ ակնհայտ է շահերի եւ մրցակցության բախում եւ ուժեղացում, հետեւաբար՝ Ադրբեջանն այստեղ էլ փորձում է ինչ-որ քաղաքական դիվիդենտներ շահել: Նա մեղադրում է ամերիկացի համանախագահին, բայց մեղադրում է անձնավորած: Ադրբեջանը չի համարձակվում մեղադրել ԱՄՆ-ին, բայց անձնավորած ձեւով նույն ԱՄՆ-ին է մեղադրում, չի կարողանում մեղադրել Մինսկի խմբի համանախագահության ողջ կազմին եւ, հետեւաբար, մի խաղ է խաղում, ըստ որի? փորձում է այս իրավիճակում ցույց տալ, որ կարող է նաեւ փոփոխության ենթարկել իր արտաքին քաղաքական վեկտորի ուղղվածությունը»,- նշեց Դավիթ Բաբայանը:

Ըստ Դավիթ Բաբայանի՝ Ադրբեջանի ներքին քաղաքական դաշտում վատ զարգացումներ են տեղի ունենում. «Մենք տեսնում ենք, որ Ադրբեջանում շատ վատ զարգացումներ են տեղի ունենում երկրի ներսում: Ձերբակալում են քաղաքացիական սեկտորի ներկայացուցիչներին: Իհարկե, մտածել, որ Միր Կադիրովը կամ Արիֆ Յունուսը ունեն արմատական նոր պատկերացումներ կամ տարբեր պատկերացումներ ադրբեջանաղարաբաղյան հակամարտության վերաբերյալ, քան պաշտոնական Բաքուն՝ ճիշտ չէ. նրանք ունեն միեւնույն պատկերացումը, բայց ի տարբերություն իշխանությունների՝ նրանք կողմնակից չեն պատերազմի: Սա շատ վտանգավոր է, երբ որ Ալիեւը ձերբակալում է բոլոր նրանց, ովքեր տեսնում են, որ պատերազմը կբերի իրենց պետության կործանմանը: Այստեղ կա եւս մեկ այլ խնդիր: Ալիեւի ռեժիմը եւ իր դիրքերը պետության ներսում, ըստ իս, թուլանում են, հետեւաբար՝ նա փորձում է ձերբակալել եւ ճնշել այն բոլոր ուժերին, որոնք անգամ քիչ հնարավորություն ունեն իրենց շուրջը համախմբել մարդկանց կամ ունեն կապեր արտաքին աշխարհի հետ: Եւ հիմա, երբ սրվում է աշխարհաքաղաքական իրավիճակը արեւելյան Եւրոպայում, Ադրբեջանը՝ իմանալով, որ միջազգային հանրային ուշադրությունը սեւեռված է Ուկրաինայի վրա, ընտրելով ճիշտ պահը՝ նման քայլերով փորձում է աննկատ դարձնել այն ամենն, ինչ կատարվում է իր երկրի ներսում: Այս ամենը շատ վտանգավոր է, եւ առաջին հերթին քաղաքակիրթ հանրությունը պետք է նման քայլերի վրա ուշադրություն դարձնի, նույնիսկ պատժամիջոցներ կիրառի Ադրբեջանի նկատմամբ, քանզի անհեթեթություն է դառնում մի պետություն, որը ճնշում է քաղաքացիական սեկտորին, խախտում է մարդու իրավունքները եւ այնտեղ 2015 թվականին անց են կացվելու առաջին Եվրոպական խաղերը: Սա ուղղակի որեւէ տրամաբանության մեջ չի մտնում»:

Դավիթ Բաբայանի խոսքերով՝ Մինսկի խմբի աշխատանքները ձեռնտու են բոլորին: Քանզի, եթե չլիներ Մինսկի խումբը, անկանխատեսելի է, թե ինչ իրավիճակ կլիներ տարածաշրջանում. «Մինսկի խմբի աշխատանքը մենք չպետք է դիտարկենք հակամարտության վերջնական կարգավորման տեսանկյունից: Հակամարտությունն ունի երկու հիմնական ուղղություն: Վերջնական կարգավորումը միայն մի փոքրիկ մասն է. շատ ավելի կարեւոր է կայունության եւ խաղաղության պահպանումը տարածաշրջանում: Հենց դրանով էլ զբաղվում է Մինսկի խումբը: Եւ զբաղվում է բավականին արդյունավետ, քանի որ արդեն 20 տարի է, ինչ պահպանվում է զինադադարի ռեժիմը: Իհարկե, լինում են հրադադարի ռեժիմի խախտումներ, որի արդյունքում զոհվում են մեր զինվորները: Ամեն մի զինվորի կորուստը ողբերգություն է եւ անդառնալի է մեզ համար: Այնուամենայնիվ, խաղաղությունը պահպանվում է»:

Անի ԱՂԱՏՅԱՆ

Կարեւորվեց երկրի քաղաքական ուժերի պատասխանատվություն ստանձնելու հարցը

Մայիսի 2-ին ԼՂՀ նախագահի նստավայրում տեղի է ունեցել հանդիպում ԼՂՀ նախագահի եւ ԼՂՀ ԱԺ «Դաշնակցություն» խմբակցության միջեւ:

ԼՂՀ ԱԺ «Դաշնակցություն» խմբակցություն ղեկավար Արմեն Սարգսյանի խոսքերով՝ նման հանդիպումները կարեւոր են այն առումով, որ երկրի նախագահը պատկերացում է կազմում տարբեր հարցերի վերաբերյալ կուսակցությունների տեսակետների եւ մտահոգությունների մասին: Հանդիպումների պարբերականությունը առիթ կհանդիսանա արծարծվող հարցերն ու խնդիրները ոչ միայն քննարկելու, այլեւ դրանց լուծման եղանակներ առաջարկելու, եւ ստուգելու կատարված աշխատանքների արդյունավետությունը:

Արմեն Սարգսյանը նշեց, որ ՀՅԴ խմբակցությունը բազում հանդիպումներ է ունենում տարբեր համայքներում (90-ից ավել), եւ մանրամասն է տիրապետում ժողովրդին մտահոգող խնդիրներին, որոնք էլ ներկայացվեցին նախագահին:

«Հանդիպման ընթացքում քննարկվեցին երկրի արտաքին եւ ներքին քաղաքականությանն առնչվող մի շարք կարեւորագույն հարցեր, կարեւորվեցին իշխանությունների կողմից տարվող աշխատանքները, մասնավորապես? վերաբնակեցման քաղաքականությունը, գյուղապետերի վերապատրաստման գործընթացը, արտաքին քաղաքականության մեջ իշխանությունների կողմից կատարված արմատական փոփոխությունը, որի արդյունքում իշխանությունները ձեռնամուխ եղան սկսելու ԼՂՀ ճանաչման գործընթացը՝ օգտագործելով ամբողջ սփյուռքի, հատկապես ՀՅԴ Հայ Դատի գրասենյակների ներուժը»,- ասաց Արմեն Սարգսյանը:

Հանդիպման ընթացքում քննարկվեցին կառավարման համակարգի, կադրերի ընտրության վերաբերյալ հարցեր, որտեղ կառավարման համակարգում խմբակցության կողմից շեշտվեց նոր մտածելակերպ ունեցող ուժերի ներգրավվածության անհրաժեշտությունը:

Ինչպես նշեց «Դաշնակցություն» խմբակցության ղեկավարը՝ անդրադարձ եղավ ընտրական օրենսգրքի փոփոխություններին: Խմբակցության կողմից կարեւորվեց 100 տոկոս համամասնական ընտրակարգին, ինչպես նաեւ խորհրդարանական համակարգին անցնելու հարցերը:

Մտքեր ծավալվեցին բուհական համակարգի կատարելագործման անհրաժեշտության շուրջ:

Երկուստեք հատուկ կարեւորություն տվեցին լրատվամիջոցներով եւ իշխանություն-ժողովուրդ ուղղակի շփումների արդյունքում ազգաբնակչությանը՝ երկրում առկա խնդիրներին տեղյակ պահելու վերաբերյալ:

Միաժամանակ, անկաշկանդ մթնոլորտում քննարկումների նյութ դարձան այնպիսի հարցեր, որոնք ըստ էության խոչընդոտ են հանդիսանում երկրի լիարյուն կենսագործունեությանը: Կայուն եւ դինամիկ զարգացող կառավարման համակարգ ունենալու համար կարեւորվեց երկրի քաղաքական ուժերի պատասխանատվություն ստանձնելու հարցը:

Նախագահի առաջարկով նմանատիպ հանդիպումներ կլինեն ամեն եռամսյակում:

Ա. ՆԱՐԻՆՅԱՆ

Մոտ ապագայում Արցախը Եվրամիության անդամ կդառնա

Վերջերս Եվրոպայի եւ Իսպանիայի Թագավորության խորհրդարանների մի խումբ պատգամավորների եւ նրանց ուղեկցող անձանց ընդունել են ԼՂՀ Նախագահը, ԱԺ նախագահը եւ ԼՂՀ վարչապետը: ԼՂՀ նախագահի հետ ունեցած հանդիպման ժամանակ երկրի ղեկավարը կարեւորել է եվրոպական տարբեր կառույցների եւ պետությունների հետ հարաբերությունների զարգացումը՝ այն համարելով օգտակար Արցախի համար թե աշխարհաքաղաքական, թե հայկական սփյուռքի հետ կապերի ամրապնդման տեսանկյուններից: Ինչպես տեղեկացնում են նախագահի տեղեկատվության գլխավոր վարչությունից՝ հանդիպման ժամանակ քննարկվել են ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության կարգավորմանը, տարածաշրջանային գործընթացներին եւ երկկողմ հարաբերություններին առչնվող հարցեր:

«Մեր այցի նպատակն է՝ ծանոթանալ Ղարաբաղում առկա իրավիճակին, քանի որ՝ ինչքան էլ լսես, պետք է այցելես այդ երկիրը, որ իմանաս, թե ինչպես են ժողովրդավարական գործընթացներն ընթանում»,- լրագրողների հետ ունեցած ճեպազրույցի ժամանակ նշեց Եվրախորհրդարանի պատգամավոր Ինակի Իրազաբալբեյտա Ֆերնանդեսը,-մեզ հետաքրքիր էր, թե ինչպես է հետպատերազմյան զարգացումը տեղի ունենում այս երկրում: Մենք ցանկանում էինք ավելի մոտիկից ծանոթանալ երկրին, այստեղ ապրող ժողովրդին եւ նրանց ձգտումներին»:

Եվրախորհրդարանի պատգամավորը խոսեց նաեւ ինքնորոշման իրավունքի մասին: Ըստ Ինակի Իրազաբալբեյտա Ֆերնանդեսի՝ մարդիկ պետք է հնարավորություն ունենան ինքնորոշվելու՝ անկախ նրանից, թե որտեղ են բնակվում. «Ինքնորոշման իրավունքը, ինչպես բոլորս գիտենք, վերջերս բավականին լայն տարածում է գտել, քանի որ մենք գիտենք, որ դա ժողովրդավարական իրավունք է, եւ մարդիկ պետք է հնարավորություն ունենան ինքնորոշվելու՝ անկախ նրանից, թե որտեղ են բնակվում՝ ելնելով նրանց աշխարհագրական դիրքից: Եվ այս առումով, ինձ թվում է, Եվրոպայում էլ հետաքրքիր զարգացումներ են տեղի ունենում, հատկապես՝ եթե հաշվի առնենք Կատալոնիայում ինքնորոշման հետ կապված գործընթացը, ինչպես նաեւ Շոտլանդիայում սպասվելիք հանրաքվեն, որը հնարավորություն կտա այդ երկու ազգերին ինքնորոշվել Եվրոպայի տարածքում: Ինձ թվում է, Եվրոպան պետք է հասնի նրան, որ այս երկու պետությունների օրինակով հասկանա, որ փոքրիկ ազգերն իրավունք ունեն ինքնորոշվելու եւ, որպես այդպիսին, իրավունք եւ տեղ պետք է ունենան անդամակցելու Եվրամիությանը»:

Եվրախորհրդարանի պատգամավորը չբացառեց առաջիկայում Արցախի անդամակցությունը Եվրամիությանը. «Ինձ թվում է որ մոտ ապագայում Ղարաբաղը նույնպես Եվրամիության անդամ կդառնա, քանի որ այն արդեն ինքնորոշվել է: Հատկապես կուզենայի նշել, որ Եվրոպան պետք է փորձի չմոռանալ իր արեւելյան եզրագծում գտնվող երկրներին, ինչպիսին Ղարաբաղն է, որովհետեւ ես այն կարծիքին եմ, որ Ղարաբաղը՝ դա Եվրոպայի արեւելյան սահմանն է»:

Եվրախորհրդարանի պատգամավորի խոսքերով՝ Եվրամիության մոդելն այնքան էլ ժողովրդավար չէ, քանի որ այն հիմնված է ազգային պետությունների վրա, մինչդեռ այն պետք է հիմնված լինի Եվրոպայում բնակվող ազգերի իրավունքների իրագործման վրա. «Կարծում եմ, որ ղարաբաղցիների եւ բասկերի, ինչպես նաեւ այլ ժողովուրդների ուժերով պետք է Եվրոպան դարձնել այնպիսի մի ընտանիք կամ կառույց, որը հիմնված է լինելու մարդու իրավունքների վրա, եւ այդ դեպքում այն սոցիալապես ավելի արդար կլինի բոլորի համար: Եվ ոչ թե հիմնված կլինի տնտեսական կամ ազգային շահերի վրա»,- նշեց Ինակի Իրազաբալբեյտա Ֆերնանդեսը:

Եվրամիության պատգամավորը հավաստիացրեց, որ Եվրամիությունն իր կառուցվածքով միատարր չէ եւ, որպես այդպիսին, այն չի կարող միաձայն լինել արտաքին քաղաքականության հարցերով: ,Եվրամիությունը 28 առանձին ձայն է հնչեցնում եւ խնդիրներից մեկը հենց այս հանգամանքի մեջ է: Եվրոպան այսօր ի վիճակի չէ միասնական ձայնով հանդես գալու եւ արտահայտվելու՝ դեպի արեւելք ընդլայնման հարցի առումով: Ըստ իս՝ եվրոպական միության արտաքին քաղաքականության բնագավառում Եվրոպան պետք է առաջնորդվի այլ արժեքներով: Ներկայումս այն չի առաջնորդվում այն արժեքներով, որը հնարավորություններ կտա փոքր ազգերի իրավունքներին ու հետաքրքրություններին: Այդ ազգերը մշակութային առումով եւ արժեհամակարգով մեզ ավելի մոտ են, եւ պետք է հաշվի առնվեն նրանց շահերը: Տվյալ դեպքում՝ Եվրոպան առաջնորդվում է Ամերիկայի Միացյալ նահանգների շահերով. Ուկրանիայի դեպքը սրա վառ ապացուցն է: Դրա համար մենք պետք է պայքարենք, որ Եվրոպան դեպի արեւելք ընդլայնվելու մեջ հաշվի առնի ոչ միայն տնտեսական շահը եւ քաղաքական նկատառումները, այլեւ այն հանգամանքը, որ այստեղ ապրող մարդիկ ավելի եվրոպական են եւ ավելի մոտ են մեզ»:

Օրվա երկրորդ կեսին Եվրախորհրդարանի պատգամավորները հանդիպեցին հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:

Անի ԱՉԱՏՅԱՆ

Կալիֆորնիան ճանաչեց Արցախի անկախությունը

ԱՄՆ Կալիֆորնիա նահանգի օրենսդիր մարմնը ճանաչել է Արցախի անկախությունը: Արցախի անկախությունը ճանաչող բանաձեւի օգտին քվեարկել են 70 օրենսդիր, եւ ընդամենը 1 դեմ քվե է գրանցվել: Օրենսդիրները հավանության են արժանացրել մայիսի 5-ին Կալիֆորնիայի նահանգային ասամբլեայի իրավական հարցերով հանձնաժողովի ընդունած բանաձեւը, որով Կալիֆորնիայի խորհրդարանը իր աջակցությունն է հայտնում Արցախիին՝ որպես ազատ եւ անկախ պետություն զարգանալու ջանքերը, որպեսզի իր քաղաքացիների համար ապահովի ազատ եւ անկախ հասարակությանը վայել իրավունքներով: Կալիֆորնիայի խորհրդարանի ընդունած բանաձեւը նաեւ կոչ է անում ԱՄՆ Կոնգրեսին եւ նախագահին? աջակցել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ինքնորոշմանը եւ ժողովրդավարական անկախությանը:

«Այսօր ջախջախիչ մեծամասնությամբ քվեարկությամբ Կալիֆորնիայի նահանգային խորհրդարանը պաշտոնապես կանգնեց Լեռնային Ղարաբաղի ժողովրդի կողքին եւ վերահաստատեց իր աներեր հանձնառությունը՝ բոլոր ժողովուրդների ազատության եւ ինքնորոշման իրավունքի հանդեպ»,- ասել է Կալիֆորնիայի նահանգային խորհրդարանի նախագահ Ջոն Փերեզը:

Կալիֆորնիայի նահանգային խորհրդարանն իր քարտուղարությանը հանձնարարել է բանաձեւի կրկնօրինակներն ուղարկել ԱՄՆ նախագահին եւ պաշտոնատար այլ անձանց:

Բանաձեւի հիմնական հեղինակը նահանգային օրենսդիր Մայք Գաթոնն էր, ում նախաձեռնությանն իրենց ակտիվ աջակցությունն են հայտնել ՀՅԴ ԱՄՆ Հայ Դատի հանձնախմբերը, ամերիկահայ մի շարք այլ կազմակերպություններ:

Ի դեպ, բանաձեւի դեմ լայնածավալ աշխատանքներ էին իրականացնում նաեւ հրեական լոբբիստական կազմակերպությունները, այդ մասին տեղեկացնում է «ԵրկիրՄեդիա» հեռուստաընկերության կայքը:

Արցախի անկախությունը ճանաչող բանաձեւեր են ընդունել ԱՄՆ Ռոդ Այլենդ, Մեյն, Լուիզիանա, Մասաչուսեթս նահանգները, իսկ իր ուղերձով Արցախին աջակցություն է հայտնել Մերիլենդի նահանգապետը:

«ԱՊԱՌԱԺ»

Եվրոպացի խորհրդարանականների հանդիպումները ԼՂՀ Ազգային ժողովում

Ճանաչողական այցով Արցախ ժամանած Եվրախորհրդարանի պատգամավորներին ընդունել է ԼՂՀ Ազգային ժողովի նախագահ Աշոտ Ղուլյանը: Եվրախորհրդարանի պատգամավորներ «Կանաչներ-Եվրոպական ազատ դաշինք»-ի անդամ Ինակի Իրազաբալբեյտա Ֆերնանդեսի ու նրա օգնական Օլգա Վիտորիա Պերեսի, Իսպանիայի խորհրդարանի պատգամավոր, «Ամայուր» կոալիցիայի անդամ Հոն Ինյարիտուի ու նրանց ուղեկցող անձանց, ինչպես նաեւ ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Թեւան Պողոսյանի, «Հայաստանի եվրոպական ընկերներ» կազմակերպության ղեկավար Էդուարդո Լորենսո Օչոայի եւ նույն կազմակերպության անդամ Ստեֆանի Կլինսկու ու երեւանյան գրասենյակի տնօրեն Հովհաննես Գրիգորյանի հետ ունեցած հանդիպման ժամանակ Ա. Ղուլյանը հույս է հայտնել, որ պատվիրակության այցն Արցախ եւ առհասարակ արցախյան հանդիպումները նրանց հնարավորություն կտան որոշակի գաղափար կազմելու երկրի մասին: Խորհրդարանի ղեկավարը կարեւորել է՝ մի կողմից՝ Եվրոպայի խորհրդարանական ու կուսակցական կառույցների, մյուս կողմից՝ ԼՂՀ խորհրդարանի եւ քաղաքական ուժերի միջեւ շփումների ու համագործակցության կապերի ձեւավորման անհրաժեշտությունն ու ընթացքը:

Հանդիպմանը մասնակցում էին ԼՂՀ ԱԺ պատգամավորներ, «Հայրենիք» եւ «Դաշնակցություն» խմբակցությունների ղեկավարներ Գագիկ Պետրոսյանը եւ Արմեն Սարգսյանը:

«Խնդրի ակնհայտ արտահայտություն է Բասկերի երկրից ժամանած պատվիրակության ներկա այցը, ինչը ուշագրավ նախադրյալ կարող է հանդիսանալ հետագա համագործակցության համար»,- նշել է Ա. Ղուլյանը:

Եվրախորհրդարանի պատգամավոր Ինակի Ֆերնանդեսն իր հերթին նշել է, որ իրենց ներկա այցը կարելի է դիտել որպես այս տարվա փետրվարին Սանտյագո դե Կոմպոստելա քաղաքում Արցախի խորհրդարանի ղեկավարի հետ հանդիպման շարունակություն եւ ապագա համագործակցության սկիզբ:

Հանդիպման ավարտին ԱԺ նախագահը Ինակի Ֆերնանդեսին եւ Հոն Ինյարիտուին նվիրել է Ղարաբաղյան շարժման՝ արցախահայության ազգային-ազատագրական պայքարի 25-ամյակը խորհրդանշող հուշամեդալներ:

Ա. ԱՉԱՏՅԱՆ

Ուորլիքի կետերը հակասում են ԵԱՀԿ Հելսինկյան եզրափակիչ ակտին

Արցախի հիմնախնդրի լուծմանն ուղղված՝ վերջերս տեղի ունեցող զարգացումները, մասնավորապես ԵԱՀԿ Մինսկի խմբի ամերիկացի համանախագահ Ջեյմս Ուորլիքի կողմից հնչեցված վեց կետերը, որոնք ըստ էության նույն Մադրիդյան սկզբունքներն են, ինչն էլ հայտարարվել էր, որ հիմնված է ԵԱՀԿ Հելսինկյան եզրափակիչ ակտի դրույթների վրա: Բայց որքանով են Ուորլիքի առաջարկած կետերը, ինչպես նաեւ Մադրիդյան փաստաթուղթը համապատասխանում ԵԱՀԿ Հելսինկյան եզրափակիչ ակտի սկզբունքներին:

Հելսինկյան եզրափակիչ ակտը ինքնին կարեւոր միջազգային փաստաթուղթ է, եւ կարելի է ասել՝ այն լրացնում է ՄԱԿ-ի Կանոնադրությամբ եւ այլ փաստաթղթերով սահմանված սկզբունքները: Այն կազմված է 10 սկզբունքներից, որոնք այդ ակտը ստորագրած երկրները պարտավորվում են հարգել, կատարել եւ պաշտպանել: Հելսինկյան եզրափակիչ ակտը հրապարակում է, որ Հ□.մասնակից երկրները պայմանավորվում են հարգել 10 սկզբունքները եւ գործել դրանց համաձայն. այդ սկզբունքները համակարգում են նրանց միջեւ հարաբերություններըՄՆ: Ուշադրություն դարձրեք այս նախադասությանը, որն ինքնին շատ կարեւոր է Արցախի համար, քանի որ Ադրբեջանը, ստորագրելով փաստաթուղթը, պարտավորվել է հարգել եւ պաշտպանել բոլոր 10 սկզբունքները, այդ թվում նաեւ՝ ազգերի ինքնորոշման իրավունքը:

Այսպիսով, Արցախի համար ինչ կարեւոր սկզբունքներ են ներառված Հելսինկյան եզրափակիչ ակտի մեջ: Ուժի կամ ուժի սպառնալիքի չմնորածումը (2-րդ սկզբունք), սահմանների անխախտելիությունը (3-րդ սկզբունք), պետության տարածքային ամբողջականությունը (4-րդ սկզբունք), վեճերի խաղաղ կարգավորումը (5-րդ սկզբունք), մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների հարգում՝ ներառյալ մտքի, խղճի, դավանանքի եւ համոզմունքի (8-րդ սկզբունք), ժողովուրդների հավասարությունը եւ իր ճակատագրի տնօրինման իրավունքը (9-րդ սկզբունք), միջազգային իրավունքով նախատեսված պարտականությունների բարեխիղճ կատարումը (10-րդ սկզբունք):

Ուժի կամ ուժի սպառնալիքի չկիրառման եւ վեճերի խաղաղ կարգավորման սկզբունքները, կարելի է ասել, համարժեք են եւ ունեն միեւնույն բնույթը: Թերեւս այս սկզբունքները մանրամասնորեն ներկայացնելու կարիք չկա, քանի որ հենց սկզբունքների անվանումից պարզ է դառնում, որ պետությունները պարտավորվում են ուժ եւ ուժի սպառնալիք չկիրառել այլ պետությունների դեմ՝ ցանկացած իրավիճակում, եւ միմյանց միջեւ առաջացած վեճերը պետք է կարգավորվեն խաղաղ ճանապարհով: Այս սկզբունքները կոպտորեն խախտվում են Ադրբեջանի կողմից եւ, չգիտես ինչու, այդ ամենը կատարվում է ԵԱՀԿ եւ միջազգային հանրության տարօրինակ լռության ներքո, եւ միջազգային հանրության կողմից նման անփույթ եւ անթույլատրելի վերաբերմունքի արդյունքում է, որ ադրբեջանական իշխանությունների լկտիությունը հասել է այն աստիճանի, որ նախագահի մակարդակով հայտարարվում է, թե Ադրբեջանի թիվ մեկ թշնամին համարվում է աշխարհասփյուռ հայությունը: Այստեղ հարկ եմ համարում մեր եվրոպական բարեկամներին հիշեցնել, որ սկզբունքը ներառում է ոչ միայն ուժի կիրառման արգելքը, այլ նաեւ ուժի կիրառման սպառնալիքի արգելքը, իսկ Ադրբեջանը մեկ անգամ չէ, որ հայտարարում է իր իսկ անկատար երազանքի? Հայաստան պետությունը վերացնելու մասին: Իսկ վեճերի խաղաղ կարգավորման սկզբունքի կատարման համար միջազգային իրավունքում նշված կարեւորագույն պայմաններից է բանակցությունները հակամարտող կողմերի միջեւ՝ առաց ուժի կիրառման սպառնալիքի: Թերեւս տարօրինակ է թվում, թե ինչու Ադրբեջանը անհասկանալի պատճառներով հրաժարվում է բանակցել Արցախի Հանրապետության հետ, որը, ի դեպ, հենց նույն ԵԱՀԿ շատ փաստաթղթերում ճանաչված է՝ որպես հակամարտող կողմ, ու առավել տարօրինակ է ԵԱՀԿ կողմից լռությունն ու Ադրբեջանի քմահաճույքներով շարժվելը: Փաստացի տեսանք, որ ադրբեջանական կողմը լիովին խախտում է Հելսինկյան եզրափակիչ ակտի այս երկու հիմնարար սկզբունքները:

Եվ այսքանից հետո պարոն Ուորլիքը մեզ առաջարկում է ինչ-որ անհասկանալի միջազգային երաշխիքներ՝ մեր ազատագրված հողերի դիմաց: Իհարկե, պետք է ապուշ լինել, որպեսզի հավատալ դրանց: Հիշեցնեմ, որ Ուորլիքը իր կետերից մեկում նշում է՝ պետք է ապահովվեն անվտանգության միջազգային երաշխիքներ, ինչը կներառի խաղաղապահ գործողություն: Չկա այնպիսի սցենար, որտեղ խաղաղությունն ապահովվի առանց լավ մշակված ու բոլոր կողմերի վստահությունը վայելող խաղաղապահ գործողության:

Երրորդ սկզբունքին, այսինքն՝ **սահմանների անխախտելիության սկզբունքին** վերաբերող դրույթը շարադրված է

շատ հստակ. «Մասնակից պետությունները միմյանց սահմանները համարում են անխախտելի... Նրանք ձեռնպահ կմնան այժմ եւ ապագայում այդ սահմանների վրա ցանկացած ոտնձգություններից: Ինչպես նաեւ նրանք համապատասխանաբար ձեռնպահ կմնան ցանկացած պահանջներից կամ գործողություններից, որոնք ուղղված կլինեն ցանկացած մասնակից երկրի լրիվ տարածքի կամ նրա մի մասի բռնազավթմանը...»: Պարզից էլ պարզ է, որ երբեք հայկական կողմը, Ադրբեջանի կողմից հայկական պետությունների նկատմամբ սանձազերծված ագրեսիայի արդյունքում տեղի ունեցած պատերազմից հետո, Ադրբեջանի տարածքների նկատմամբ որեւէ ոտնձգություն չի կատարել՝ ի տարբերություն ադրբեջանական կողմի, որ ամեն մակարդակով ռազմական սպառնալիքներ է հնչեցնում ոչ միայն Արցախի, այլեւ Հայաստանի Հանրապետության նկատմամբ, ինչպես նաեւ Հայաստանի եւ Արցախի սահմաններում սարդրանքներ է կատարում: Ընդհանրապես սահմանների անխախտելիության սկզբունքը, այսպես ասած, կարծր բնույթ չունի, ինչն ապացուցվել է միջազգային պրակտիկայով: Այսօր Եվրոպայում փոխվել է այն սահմանները, որոնք գործում էին Հելսինկյան եզրափակիչ ակտի ստորագրման ժամանակ, եւ ներկայումս այլեւս չկան այնպիսի երկրներ, ինչպիսիք են Հարավսլավիան, Չեխոսլովակիան, ԽՍՀՄ-ը: Փոխարենը նրանց տեղը զբաղեցրել են նորանկախ երկրներ՝ իրենց նոր սահմաններով եւ սահմանների անձեռնմխելիությամբ, իսկ ԳՖՀ-ն եւ ԳԴՀ-ն միավորվել են եւ ստեղծել միացյալ Գերմանիա՝ իր նոր սահմաններով:

Իսկ ի՞նչ է **տարածքային ամբողջականության սկզբունքը**: Այս սկզբունքի մասին կարելի է խոսել երկար, սակայն լակոնիկ լինելու համար մեջբերեմ միայն քննարկվող ակտում ներկայացված սահմանումը. «Մասնակից երկրները ձեռնպահ կմնան ՄԱԿ-ի Կանոնադրության նպատակներին եւ սկզբունքներին հակասող ցանկացած գործողություններից, այսինքն՝ ցանկացած մասնակից երկրների տարածքային ամբողջականության, քաղաքական անկախության կամ միասնականության դեմ, եւ, մասնավորապես, ցանկացած այնպիսի գործողություններից, որոնք իրենցից կներկայացնեն ուժի կիրառում կամ ուժի կիրառման սպառնալիք: Մասնակից երկրները հավասարապես ձեռնպահ կմնան միմյանց տարածքները ռազմական բռնազավթման օբյեկտի վերածելուց, կամ այլ՝ ուղղակի կամ անուղղակի ուժի կիրառման գործողություններից եւ միջազգային իրավունքի խախտմանն ուղղված այլ գործողություններից: Ոչ մի բռնազավթում կամ նման այլ ձեռքբերումներ օրինական չեն ճանաչվի»: Փաստացի երեւում է, որ ադրբեջանական կողմին ներկայացվող տարածքային ամբողջականության սկզբունքի խախտման մասին մեր դեպքում խոսք լինել չի կարող: Նախ ճշտենք, թե որ երկրի տարածքային ամբողջականության մասին է խոսքը: Այստեղ կա մի ուշագրավ փաստ, որը թերեւս դուրս է մնացել հակամարտության կարգավորման շրջանակներից: Ադրբեջանի Հանրապետությունը Հելսինկյան եզրափակիչ ակտը ստորագրել է 1992թ., եւ Արցախի Հանրապետությունը չէր կարող մաս կազմել Ադրբեջանի տարածքային ամբողջականությանը, քանի որ չէր գտնվում Ադրբեջանի իրավազորության ներքո, նամանավանդ, որ Ադրբեջանը, հռչակելով իր անկախությունը, ԽՍՀՄ-ից իրեն հայտարարել է որպես 1918թ. Ադրբեջանի Հանրապետության իրավահաջորդ, որն, ի դեպ, չէր ճանաչվել միջազգային հանրության կողմից: Իսկ Արցախի Հանրապետությունն իր ներկայիս տարածքներով չէր մտնում 1918թ. Ադրբեջանի Հանրապետության մեջ: Ուստի, նախ պետք է ճշտել, թե տվյալ դեպքում ինչ պետության տարածքային ամբողջականության մասին է խոսքը՝ ԱդրԽՍՀ, թե Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետության: Երկուսն էլ չէին հանդիսանում միջազգային իրավունքի սուբյեկտ, ուստի նաեւ չունեին սուվերեն երկրին հատուկ հստակ սահմաններով պարփակված տարածքային ամբողջականության հատկություններ, ուստի՝ ներկայիս Ադրբեջանի նկրտումները Արցախի Հանրապետության նկատմամբ իրավական որեւէ հիմք չունեն: Ի դեպ, հենց Ադրբեջանի Հանրապետությունն է խախտել Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականությունը: Հիշենք արդեն իսկ մոռացված Արծվաշենի, ինչպես նաեւ Շահումյանի ու Գետաշենի մասին, որոնք օկուպացված են առ այսօր Ադրբեջանի կողմից: Եվս մեկ ուշագրավ փաստ: Քննարկվող ակտի մեջ հստակորեն նշված են տարածքային ամբողջականության սկզբունքի խախտման հատկանիշները, եւ մասնավորապես նշվում է. Հ□Մասնակից երկրները հավասարապես ձեռնպահ կմնան միմյանց տարածքները ռազմական բռնազավթման օբյեկտի վերածելուց, կամ այլ՝ ուղղակի կամ անուղղակի ուժի կիրառման եւ միջազգային իրավունքի խախտմանն ուղղված այլ գործողություններիցՄՆ: Վերը նշվածից հստակ երեւում է, որ ոչ միայն Հայաստանը չի խախտել որեւէ երկրի տարածքային ամբողջականության սկզբունքը, այլ ընդհակառակը, հենց Հայաստանի եւ Արցախի տարածքներն են դեռեւս 1990-ականների սկզբներին բազմիցս ենթարկվել Ադրբեջանական զինված ուժերի հարձակումներին ու մինչեւ հիմա անընդհատ տեղի են ունենում սահմանային միջադեպեր: Դրան ավելացնել կարելի է Հայաստանի, Արցախի եւ հայ ժողովրդի հասցեին հարեւան Ադրբեջանից անընդհատ հնչող հակահայկական, ռազմաշունչ եւ ֆաշիստական հայտարարությունները: Հարկ է նշել նաեւ այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետությունը երբեք չի ձգտել իր իրավազորության տակ առնել Արցախի Հանրապետությանը: Հայաստանն ընդամենը աջակցել եւ աջակցում է Արցախի հայ բնակչության ինքնորոշման իրավունքի իրագործմանը, ինչը ոչ միայն չի արգելվում միջազգային իրավունքում, այլ նաեւ, ՄԱԿ-ի Կանոնադրության համաձայն, հանդիսանում է ՄԱԿ-ի անդամ բոլոր պետությունների պարտականությունը: Ուստի, ադրբեջանական կողմի ցանկացած փորձ, որն ուղղված է Հայաստանին ագրեսորի կերպար տալուն, հանդիսանում է ոչ այլ ինչ, քան անհիմն հայտարարություններ: Ի դեպ, Հելսինկյան եզրափակիչ ակտում տալիս է բոլոր այն գործողությունների տեսակները, որոնք կարող են բնութագրվել որպես պետության տարածքային ամբողջականության խախտում:

Այս համատեքստում կարելի է դիտարկել նաեւ միջազգային իրավունքի եւս մեկ կարեւոր սկզբունք՝ ինքնապաշտպանության իրավունքը, որի համաձայն՝ յուրաքանչյուր պետություն, յուրաքանչյուր ագրեսիայից ինքնապաշտպանության իրավունք ունի, իսկ այդ ագրեսիայի արդյունքում ստեղծված իրավիճակի համար պատասխանատվությունը կրում է ագրեսոր կողմը: Ուստի, արցախյան պատերազմի արդյունքում առաջացած բոլոր խնդիրների, այդ թվում՝ նաեւ ազատագրված տարածքների, փախստականների հարցերի համար ողջ պատասխանատվությունը կրում է միայն ու միայն Ադրբեջանը:

Ի դեպ, տարածքային ամբողջականության սկզբունքը չի կիրառվում այն պետությունների նկատմամբ, որոնք բացահայտ ագրեսիա են կիրառում եւ խտրականության քաղաքականություն վարում այլ ազգերի նկատմամբ, իսկ Ադրբեջանի հակահայ քաղաքականության մասին բոլորն էլ տեղյակ են: Ադրբեջանը մի երկիր է, որտեղ հայ սպանելը ոչ միայն հանցագործություն չի համարվում, այլեւ խրախուսվում է:

→ 6

Ուորլիքի հայտարարության մեջ Ղարաբաղն անտեսված է. Կիրո Մանոյան

ՀՅԴ Բյուրոյի Հայ Դատի եւ քաղաքական հարցերի գրասենյակի պատասխանատու Կիրո Մանոյանի խոսքով՝ Ջեյմս Ուորլիքի ասածների մեջ նոր բան չկա: 2009թ. հուլիսից համանախագահող երկների նախագահներն ամեն տարի հրապարակել են երեք սկզբունքները՝ խաղաղ կարգավորում, տարածքային ամբողջականություն եւ ինքնորոշման իրավունք:

«Նորությունն այն շեշտադրումն է, որը տալիս է ամերիկացի համանախագահողը Արցախի կարգավիճակի հարցին՝ որպես հիմնական խնդիր:

Դրական բան չկա այդ հայտարարության մեջ, որովհետեւ Դաշնակցությունը բազմիցս ասել է, որ հիմնական սկզբունքների հետ հարցեր չունի, սակայն հարցը սկզբունքների հիման վրա առաջարկվող տարրերն են, երբ անտեսվում է այն հանգամանքը, որ 1988-ից հետո Ադրբեջանը պատերազմ է սանձազերծել, տանուլ է տվել, եւ իրավիճակը հիմնովին փոխվել է: Եվ եթե 1988-ին առաջարկվեր նման լուծում, կարծում եմ, հայկական կողմը կհամաձայներ, բայց հիմա նման լուծումն

անընդունելի է, որովհետեւ կարծես նպատակ են հետապնդում պատերազմ սանձազերծած եւ տանուլ տված Ադրբեջանին հատուցել«,- Yerkir.am-ի հետ զրույցում ասաց Կիրո Մանոյանը:

Նա նշեց, որ Ուորլիքի հայտարարությունը կարծես Ադրբեջանի պատասխանը լինի, որովհետեւ Ադրբեջանն է, որ իր հայտարարություններում անտեսում է Ղարաբաղի կարգավիճակի խնդրի՝ հիմնական էություն լինելու հանգամանքը: Հայտարարության մեջ բացթողում է նաեւ այն, որ Ղարաբաղն ամբողջությամբ անտեսված է, քանի որ զինադադարը ստորագրվել է ԼՂ ներկայացուցչի կողմից, ով այսօր չկա բանակցություններում եւ հայտարարության մեջ նույնպես անտեսված է:

«Անտեսում է նույնիսկ Ղարաբաղի ժողովրդին, որովհետեւ խոսքը գնում է Ադրբեջանի ու Հայաստանի ժողովուրդների մասին, այլ ոչ թե Ղարաբաղի ազգաբնակչության մասին»,- ասաց Կիրո Մանոյանը: Նրա կարծիքով՝ ամերիկացիները փորձում են ինչ-որ չափով ակտիվացնել գործընթացը, սակայն բացթողումներ կան, հատկապես՝ Ղարաբաղի անտեսումը:

«ԱՊԱՌԱԺ»

ԱՄՆ Հայ Դատի հանձնախումբն արձագանքել է Ուորլիքի ելույթին

ՀՅԴ Հայ Դատի ԱՄՆ հանձնախմբի գործադիր տնօրեն Արամ Համբարյանն արձագանքել է ԵԱՀԿ Մինսկի խմբի ԱՄՆ համանախագահ Ջեյմս Ուորլիքի՝ ղարաբաղյան հակամարտության վերաբերյալ ելույթին, որտեղ ներկայացվում է Միացյալ Նահանգների քաղաքական դիրքորոշումն Արցախի հարցում:

Արամ Համբարյանն իր հայտարարությունում հատկապես նշում է. «Ջեյմս Ուորլիքի այսօրվա ծրագիրը քիչ նոր բան է առաջարկում: Ներկայացվող շրջանակը ո՛չ բարոյապես է ընդունելի, ո՛չ էլ գործնականորեն է կայուն: Թեեւ մենք ողջունում ենք հիմնարար մակարդակում կարգավիճակի հարցին ցուցաբերված ուշադրությունը, այս ծրագիրը շատ հեռու է ժողովրդավարական ինքնորոշման ամերիկյան իդեալից, մի հարատեւ սկզբունք, որի վրա հիմնված է մեր երկիրը եւ որի վրա վերջին կես դարում ստեղծվել են ավելի քան հարյուր պետություններ: Օգտագործելով խորապես սադրող եւ ակնհայտորեն ոչ ճիշտ «շրջափակում» տերմինը՝ առաջարկված շրջանակը կրկին կոչ է անում Լեռնային Ղարաբաղին եւ Հայաստանին, Բաքվի ագրեսիայի պատերազմի զոհերին՝ ռազմավարական անվտանգության ուղղակի զիջումների գնալու խիստ ռազմատենչ Ադրբեջանի դյուրությամբ փոփոխվող խոստումներին ի պատասխան: Մենք լիահույս ենք մնում ԵԱՀԿ միջնորդությամբ խաղաղ կարգավորման հիմնական հեռանկարի հարցում, բայց հիասթափված ենք այս կոնկրետ առաջարկում կարգավիճակի եւ անվտանգության վերաբերյալ անհամաչափության համար: Որպես շահառու կողմ՝ մենք ակնկալում ենք, որ միջնորդական ներգրավվածությունը կլինի ավելի հավասարակշռված, ընդգրկուն եւ ժողովրդավարական շրջանակում՝ հանուն անկախ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ապագայի: Բաքվի արգելքի հարցը՝ Լեռնային Ղարաբաղի ամբողջական եւ ուղղակի մասնակցությանը խաղաղ բանակցություններին, իհարկե պետք է լինի ԵԱՀԿ օրակարգի առաջնային հարցերից մեկը»:

«ԱՊԱՌԱԺ»

Ուորլիքի կետերը հակասում են ԵԱՀԿ Հելսինկյան եզրափակիչ ակտին

5 ← Այսօր ադրբեջանական իշխանությունների համառ ջանքերի շնորհիվ ադրբեջանական հասարակությունը հիվանդ է արմենոֆոբիայի խոր եւ աճող հիվանդությամբ: Իսկ ութսունականներին եւ իննսունականներին Ադրբեջանում բնակվող հայերի նկատմամբ իրականացված ցեղասպանության մասին եւ Արցախի բնակչությանը բնաջնջելու նպատակով սանձազերծված պատերազմի մասին բոլորն են տեղյակ:

Ուորլիքը իր կետերում նշելով, այսպես ասած, ԼՂԻՄ-ի շուրջ տարածքների մասին, երեւի մոռացել է այս հանգամանքները, ուստի նրան եւ նրա նման մտածողներին պետք է հիշեցնել անընդհատ այս ամենի մասին:

Հաջորդ կարեւոր սկզբունքը, արդեն իսկ քիչ թե շատ մեզ ծանոթ, **ազգերի ինքնորոշման իրավունքի սկզբունքն է:** Բազմիցս փորձում են ազգերի ինքնորոշման իրավունքը եւ տարածքային ամբողջականության սկզբունքները հակասության մեջ դնել, սակայն դա հանդիսանում է քաղաքական դիրքորոշում, իրականում ոչ մի հակասություն չի կարող լինել այդ երկու սկզբունքների միջեւ: Հենց քննարկվող ակտի՝ ազգերի ինքնորոշման իրավունքին վերաբերվող սկզբունքը վկայում է դա. ՀՄասնակից պետությունները կհարգեն ժողովուրդների իրավահավասարությունը եւ ինքնորոշման իրավունքը՝ մշտապես գործելով ըստ ՄԱԿ-ի Կանոնադրության նպատակների ու սկզբունքների եւ միջազգային իրավունքի համապատասխան նորմերի՝ ներառյալ նրանք, որոնք վերաբերում են պետությունների տարածքային ամբողջականությանը: Ելնելով ժողովուրդների իրավահավասարության եւ ինքնորոշման իրավունքի սկզբունքից՝ բոլոր ժողովուրդները միշտ իրավունք ունեն լիակատար ազատության պայմաններում, երբ եւ ինչպես նրանք ցանկանում են, որոշել իրենց ներքին ու արտաքին քաղաքական կարգավիճակը՝ առանց արտաքին միջամտության, եւ սեփական հայեցողությամբ իրականացնել իրենց քաղաքական, տնտեսական, սոցիալական ու մշակութային զարգացումը: Մասնակից պետությունները վերահաստատում են ժողովուրդների իրավահավասարության եւ նրանց ինքնորոշման իրավունքի հարգման եւ արդյունավետ իրականացման համընդհանուր նշանակությունը՝ նրանց միջեւ, ինչպես նաեւ բոլոր պետությունների միջեւ բարեկամական հարաբերություններ զարգացնելու համար: Նրանք նաեւ ընդգծում են այդ սկզբունքի խախտման ցանկացած ձեւը վերացնելու կարեւորությունըՄՆ: Վերը նշվածը վկայում է, որ քննարկվող ակտը հստակ սահմանազատում է ազգերի ինքնորոշման իրավունքը տարածքային ամբողջականության սկզբունքից: Իսկ տարածքային ամբողջականության սկզբունքն ուղղված է՝ ապահովվել պետություններին արտաքին ագրեսիայից, եւ այն ոչ մի կերպ չի սահմանափակում ազգերի ինքնորոշման իրավունքը: Ի դեպ, Հելսինկյան եզրափակիչ ակտը ազգերի ինքնորոշման իրավունքը միավորում է ժողովուրդների հավասարության սկզբունքին, ինչը նշանակում է, որ բոլոր ազգերը հավասար իրավունքներ ունեն սեփական հայեցողությամբ որոշելու իրենց քաղաքական կարգավիճակը՝ առանց արտաքին միջամտության, այսինքն՝ բացառապես տվյալ ազգի իրավասությունն է որոշել իր քաղաքական եւ այլ իրավունքների իրականացման ձեւը եւ բնույթը, տնօրինել իր ապագան: Քննարկվող փաստաթուղթը որեւէ ժամանակային, նպատակային կամ ձեւային սահմանափակում չի դնում ինքնորոշման իրավունքի իրականացման համար:

Ուստի, Ուորլիքի առաջարկը՝ Արցախի ժողովրդին ինչ-որ անորոշ ու անհասկանալի կարգավիճակ տալու մասին, ոչ միայն Արցախի ժողովրդի համար անընդունելի է, այլեւ հակասում է միջազգային իրավունքին, մասնավորապես՝ Հելսինկյան եզրափակիչ ակտի սկզբունքներին:

Արցախյան հիմնահարցը լուծելու շուրջ խոսելիս պետք է հաշվի առնել այս ամենը: Մինսկի խմբի համանախագահներն այս ամենին, կարծում եմ, տեղյակ են, ուղղակի ժամանակ առ ժամանակ պետք է նրանց հիշեցնել որոշակի կարեւոր բաների մասին ու թույլ չտալ Արցախի նկատմամբ երկակի ստանդարտներ կիրառսսեն, քանի որ միջազգային փաստաթղթերում ամրագրված դրույթները վերաբերվում են բոլորին եւ որեւէ ժողովուրդ որեւէ առավելություն չունի:

Վահե ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հադրութ քաղաքի Արթուր Մկրտչյանի անվան հայրենագիտական թանգարանն անմխիթար վիճակում է

Հադրութ քաղաքի Արթուր Մկրտչյանի անվան հայրենագիտական թանգարանում այս տարի մայիսի 17-18-ը՝ Թանգարանների միջազգային օրվա կապակցությամբ կկազմակերպվեն մի շարք միջոցառումներ: Թանգարանը կմասնակցի թանգարանային գիշեր միջոցառմանը:

Բացի դրանից, Թանգարանների միջազգային օրվան նվիրված՝ կկազմակերպվի արցախյան խոհանոցի վերաբերյալ ե՛ւ ցուցադրություն, ե՛ւ համտես, որին կհաջորդի թոնրում պատրաստվող ուտեստների համտես Թաղասեռ գյուղում: Թոնրի թեման պատահական չէ ընտրված. այն հանդիսանում է արցախյան կենսակերպի մի մաս, որը վերջին տարիներին դուրս է մղվում գործածությունից:

Հադրութի Արթուր Մկրտչյանի անվան հայրենագիտական թանգարանը ընդհանուր բնույթի է: Թանգարանում ամփոփված են շրջանի պատմության վերաբերյալ նմուշներ՝ սկսած ազգագրությունից, նախնադարյան հասարակարգից մինչեւ մեր օրեր, Հայրենական մեծ պատերազմից մինչեւ Արցախյան շարժում, կան արցախյան շարժման հետ կապված փաստաթղթեր, նմուշներ:

Թանգարանը սակայն գտնվում է անմխիթար վիճակում: Թանգարանի տնօրեն Լիանա Պետրոսյանը նշեց, որ չնայած թանգարանի վատ պայմաններին, թանգարանում միշտ կազմակերպվում են տարբեր բնույթի միջոցառումներ:

Թանգարանը կազմակերպում է կրթադաստիարակչական միջոցառումներ, ֆիլմի դիտում, քննարկումներ, հայրենասիրական թեմայով դասախոսություններ թե՛ դպրոցականների, թե՛ զինվորների համար, փորձում են դուրս գալ ստանդարտ ցուցադրության կաղապարներից եւ ավելի հետաքրքիր դարձնել համաքաղաքացիների առօրյան:

«Նույն ցուցադրությունը տեսնելով? մարդիկ ձանձրանում են եւ այցելուների քանակը պակասում է, դրա համար անընդհատ նոր մտահղացումներով ենք փորձում գրավել մեր այցելուներին: Երբեմն մենք նաեւ արտագնա միջոցառումներ ենք կազմակերպում: Օրինակ, հնարավոր չէ Մեծ Թաղերի ամբողջ դպրոցը բերել այստեղ, դրա համար մենք ինքներս ենք գնում համապատասխան սարքավորումներով եւ ցուցադրում այնտեղ»,- նշում է թանգարանի երիտասարդ տնօրենը:

Թանգարանի շենքը կառուցվել է 1890 թվականին: 1984 թվականից շենքի մի մասը գործում է որպես թանգարան: 1984 թվականից ի վեր թանգարանը չի վերանորոգվել: Անձրեւների, ձյան տեղումների ժամանակ թանգարանը լցվում է ջրով: Թանգարանի առաստաղը, հատակի մի մասը փտած է, պատերի վրա առկա են մեծ ճաքեր:

Ինչպես նշում է թանգարանի տնօրեն Լիանա Պետրոսյանը՝ շենքի պայմաններից ելնելով՝ թանգարանում ցուցահանդեսներ կազմակերպել չեն կարող, քանի որ ցուցասրահները պետք է ապահովված լինեն ժամանակակից կահույքով եւ համապատասխան պայմաններով՝ ջերմային պայմաններ, օդափոխություն եւ այլն:

Թանգարանը վերջին մի քանի տարիներին գտնվում էր տարբեր գերատեսչությունների իրավասության ներքո: Եվ խնդիրը, տեղափոխվելով մի գերատեսչությունից մյուսը, այդպես էլ լուծում չստացավ: Այժմ թանգարանը գտնվում է ԼՂՀ մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարության իրավասության տակ, սակայն, ինչպես տեղեկացանք, նախարարությունից առաջիկայում եւս վերանորոգում չի նախատեսվում, քանի որ վերանորոգումը կապված է մեծ ծախսերի հետ եւ նախարարությունը դեռ այդ հնարավորությունը չունի:

«Տարիներ շարունակ հարցին չեն կարողանում լուծում տալ: Նախ՝ մեծ չափսերի տարածք է պետք, որ այսօրվա դրությամբ չկա՝ նույնիսկ վարձակալությամբ վերցնելու համար, իսկ նոր շենքի շինարարությունն ամեն տարի հետաձգվում է»,- նշեց Լիանա Պետրոսյանը:

Հիշեցնենք, որ Արթուր Մկրտչյանի անունը կրող՝ Հադրութի հայրենագիտական թանգարանը գործում է 1984 թվականից: 1986 թվականին Արթուր Մկրտչյանը նշանակվեց թանգարանի տնօրեն, եւ այդ տարին թանգարանի համար եղավ բեկումնային, նա սկսեց հավաքագրված նմուշների համակարգում իրականացնել: Մինչ այդ թանգարանը թանգարանի տեսք չուներ, ներկայացված էր որպես թանգարան, սակայն զուտ գիտական մակարդակի բերվեց Արթուր Մկրտչյանի կողմից: Թանգարանի տնօրեն նշանակվելուց հետո նա սկսում է ուղեւորություններ, արշավներ կազմակերպել դեպի շրջանի տարբեր գյուղեր, հավաքում տարբեր նմուշներ եւ ներկայացնում թանգարանում:

Մկրտչյանը, լինելով պատմաբան եւ ունենալով բավականին փորձ (նա աշխատել է Սարդարապատի թանգարանում), ամեն ինչ գիտական մակարդակով էր ներկայացնում:

Երբ սկսվեց Արցախյան շարժումը, նույն արշավական խմբերը սկսեցին կամավորականների հավաքագրում: Թանգարանում էին տեղի ունենում Շարժման ակտիվիստների հավաքները, Մկրտչյանն էլ հանդիսանում էր ե՛ւ ամենաակտիվներից, ե՛ւ առաջնորդներից մեկը, ովքեր էլ սկիզբ դրեցին ազգային ազատագրական պայքարին:

Այսօր մեծ գումարներ են ծախսվում Ստեփանակերտում տարբեր միջոցառումների համար, սակայն շրջանները շատ հաճախ դուրս են մղվում ուշադրությունից: Արդեն որերորդ տարին է՝ ուշադրությունից դուրս է մղվում նաեւ անվանի գործիչ, Արցախյան շարժման խորհրդանիշ Արթուր Մկրտչյանի անունը կրող թանգարանը:

Արմինե ՆԱՐԻՆՅԱՆ

Տողի գինին պահանջարկ ունի արտերկրում

Հադրութի շրջանի Տող գյուղում է գտնվում Արցախում եւ նրա սահմաններից դուրս բավականին հայտնի ՀՀԿատարոՄՆ գինու փոքրիկ գործարանը, որը ոչ միայն հայտնի է իր որակյալ գինիներով, այլեւ հյուրասիրությամբ: Հայ եւ արտասահմանյան հյուրերը անպակաս են այնտեղ: Յուրաքանչյուր հյուրի նախ հյուրասիրում են լավագույն գինիով, ապա հպարտությամբ ցույց տալիս գործարանը եւ պատասխանում հետաքրքրող ցանկացած հարցի:

Արդեն 5 տարուց ի վեր հայաստանյան եւ ռուսաստանյան շուկայում վաճառվում է արցախյան ՀՀԿատարոՄՆ գինին: Անցյալ տարի Արենի գինու փառատոնում 2000-3000 դրամ արժողությամբ գինիների շարքում Կատարոն գրավել է առաջին տեղը:

Գինու գործարանը Հադրութի շրջանի Տող գյուղից Ավետիսյանների ընտանիքի ընտանեկան բիզնեսն է: Կատարոն կարմիր չոր գինի է, որը ստանում են խաղողի Խնդողնի տեսակից: Խաղողի այս տեսակը լայն տարածված է հատկապես Արցախում:

«Կատարո» անունը պատահական չեն ընտրել. այն Դիզափայտ սարի բարձունքի վրա գտնվող վանքի անունն է: Առաջադրված մի քանի տարբերակներից Ավետիսյան եղբայրները կանգ առան հենց այդ անվան վրա: Կատարո՝ նաեւ նշանակում է արարող, ստեղծող:

Ընտանիքը՝ հայրը իր երեք որդիների հետ, տարիներ շարունակ խաղողայգիներ էին մշակում եւ հանձնում գինեգործարաններին, սակայն եկամուտը բավականին ցածր էր, եւ որոշեցին իրենց խաղողից գինի ստանալ:

«Մշակեցինք, տեսանք, որ բավականին որակով գինի է ստացվում, տակառներ գնեցինք, շենք կառուցեցինք: Սկզբից 6 հա այգի ունեինք, եւ արտադրում էինք փոքր քանակությամբ: Հիմա ավելի շատ է: Այս տարի արդեն պատրաստվում ենք 50 հազար շիշ գինի ստանալ,- ասում է ընտանիքի հայրը՝ Էռնեստ Ավետիսյանը:

Ընտանիքի յուրաքանչյուր անդամ արդեն գիտի իր գործի բաժինը: Փոքր տղան զբաղվում է այգու գործերով, միջնեկը՝ վաճառքով, մեծը՝ գինեգործությամբ, իսկ հայրը վերահսկում է բոլոր աշխատանքները: Ընդհանուր առմամբ՝ գործարանում աշխատում է 8 հոգի, իսկ բերքահավաքի ժամանակ աշխատավորների թիվը հասնում է 30-ի:

Այսօր գործարանը գինու սպառման խնդիր չունի: Դեռ ավելին՝ գինին ամբողջությամբ սպառվում է հայաստանյան եւ ռուսաստանյան շուկայում: Մերձբալթյան երկրներ եւ Հունգարիա արտահանելու առաջարկ կա, բայց դրա համար դեռ բավականաչափ գինի չունեն: Գինու ծավալի մեծացման դեպքում կարտահանեն նաեւ այլ երկրներ:

Գրիգորի Ավետիսյանի խոսքերով? Արցախում գինեգործության զարգացման համար բավականին լավ հեռանկարներ կան: Գինեգործությամբ զբաղվելը Արցախում մի քանի անգամ ավելի հեշտ է, քան Հայաստանում: Այստեղ ցրտահարման եւ դրանից բխող մի շարք խնդիրներ չկան:

«Վաղ թե ուշ՝ Արցախը պետք է վերադառնա իր ակունքներին, դառնա գինի արտահանող երկիր եւ միջազգային շուկայում մրցի արտասահմանյան գինիների հետ»,- նշեց նա:

Ա. ՆԱՐԻՆՅԱՆ

Շուշի՝ անառիկ ամրոց



Վտանգներով լի մարտիկի կյանքը հանուն արդար գործի ավելի լավ՝ ստրուկի հանգիստ, անիմաստ կյանքից:

Ձեյմե

Շուշիի հաղթանակը յուրաքանչյուր հայի համար նշանակալից եւ կարեւորագույն օր է: Ապագա հաղթանակներն ապահովելու համար յուրաքանչյուր միշտ պետք է հիշի այդ նվիրական հաղթանակը: Հատկապես կարեւոր է, որպեսզի մաղտղաշ սերունդը դաստիարակվի եւ մեծանա Շուշիի հաղթանակի ոգով:

Մայիսի 9-ը՝ Շուշիի ազատագրման օրը, մեծ շուգով նշվեց Ստեփանակերտի թիվ 8 ավագ դպրոցում: Դպրոցն այդ օրը հյուրընկալել էր Երեւանից ժամանած աշակերտներին ու ուսուցիչներին: Դպրոցի տնօրենը՝ ազատամարտիկ Գեւորգյանը հաղթանակին նվիրված իր խոսքում փառաբանեց մեր մայիսյան հաղթանակները ու կարեւորեց Շուշիի ազատագրումը՝ որպես մի ժամանակաշրջան, երբ իրոք, չշրջեցինք մեր պատմության վերջին էջը, այլեւ կերտեցինք նոր ապագա:

Այնուհետեւ թիվ 8 դպրոցի սաներն ու ուսուցիչները մասնակցեցին կազմակերպված հաղթարշավին դեպի Շուշի՝ հաղթահարելով Շուշիի բարձրունքի դժվար ու երկար ճանապարհը: Ոչ ոք չէր դժգոհում, ոչ ոք չէր տրտնջում եւ անվերջ կրկնում էին, թե ինչքան դժվար էր մեր ազատամարտիկների համար, ինչքան ծանր էր՝ անվերջ կրակոցներ, արյուն ու մահ: Նրանց շնորհիվ այժմ խաղաղ է մեր երկինքը եւ ունենք հաղթանակծ Շուշի:



Հասնելով Շուշի՝ մոմեր վառվեցին Շուշիի Սուրբ ամենափրկիչ եկեղեցում՝ ի լուսավորումն մեր ազատության համար նահատակվածների հոգիներին:

Այնուհետեւ դպրոցականներն ու ուսուցիչները այցելեցին «Ձդրր Դուզ» կոչվող տեղանք, որտեղ իշխում էր հաղթանակած ոգին, խինդ ու պար: Հնչեցին արտասանություններ, երգեր երվեցին եւ պարեր պարվեցին:

Հետաքրքիր ու հրաշալի մի օր էր: Հայերենասիրական մեծ դաս էր դա:

Հասմիկ ԳԱԼՍՏՅԱՆ

Աֆորիզմներ

* * *

Մարդու համար նպատակին հասնելը՝ հիմնախնդիր է, եւ այդ նպատակին հասնելու ճանապարհին ցանկացած առաջ եկած գայթակղությունը պետք է անտեսվի:

* * *

Մարդ կա ապրում է այնպես, ինչպիսի պատկերացում ունենում է սիրո մասին:

* * *

Եթե կրակը վառ պահելու կարիք կա , ապա հոգատարության անհրաժեշտություն էլ կա:

* * *

Ժամանակի արժեքն իմացվում է, նրա անտեղի կորուստից հետո:

* * *

Երկրային դժողքն այնտեղ է, որտեղ անմեղ մարդու նկատմամբ կամայականություններ, բռնություններ են գործադրվում:

* * *

Երբ հասարակությունում չի գործում բարոյական կոդեկս, նպատակին հասնելու ցանկացած միջոց կգտնի իր արդարացումը:

* * *

Ինքնահաստատման ձգտողը պետք է իր համար պարզի հասարակության բարոյական վիճակը, թե որքանով՝ այն համընկնում իր ակնկալիքներին:

* * *

Եթե ջուրը մաքուր չէ, որքան ուզում ես ջրամանը փոխիր, միեւնույն է նստվածքը մնալու է:

* * *

Մարդ արարածն ընդունակ է, թե հրաշագործության, թե հրեշագործության:

* * *

Իրական ժողովրդավարական երկրում, պետության եւ անհատի շահերը միաձուլվում են:

* * *

Ստրկամտությունն առաջանում է հասարակության կողմից անհատին պարտադրված գաղափարների արմատավորումց:

* * *

Շատ դեպքերում արժանին ստիպված է լինում հանդուրժել անարժանի նվաստացումներին:

* * *

Աղքատությանը մի կերպ կարելի է դիմանալ, իսկ անարդարությանը՝ շատ դժվար, անհնար է:

* * *

Թեեւ ոչ ոք բացարձակ իրավացի լինելու երաշխիք չի ունենում, բայց հավակնություն ունեցող կամակորներ լինում են:

* * *

Փոքր հարցեր լուծելու անընդունակ մարդուց մեծ խնդիրներ լուծելու պահանջ չեն ներկայացնում:

* * *

Մերձավորի նկատմամբ, թե հարգալից, թե անհարգալից վերաբերմունքը, վաղ թե ուշ, իր անդրադարձն է ունենում:

* * *

Մարդու անբասիր բարոյական ուժն է, որ փրկում է նրան ծանր փորձությունների ժամանակ:

Դավիդ ԳԵՎՈՐԳՅԱՆ

«Ապառաժ» երկշաբաթաթերթ
Ստեփանակերտ, Կնունյանց 17,
հեռ. 97 38 43, E-mail: info@aparaj.am
Կայքէջ՝ www.aparaj.am

Նյութերի համար պատասխանատու են հեղինակները: Թերթը կարող է տպագրել նաեւ նյութեր, որոնցում արծարծված տեսակետները չի կիսում: Տպագրվում է Ստեփանակերտի «ԴԻԶԱԿ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ում: Գրանցման վկայական՝ 04: Տպաքանակը՝ 500: Գինը՝ 100 դրամ:

Խմբագրական խորհուրդ